1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ գրավոր դիմում ներկայացնելով՝ աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Մելիք-Աղամյան փող. 1 հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.4 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա գնումների բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացնում է սույն հրավերի 1-ին մասի 8.28-րդ կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

2) գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա գնումների բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

⁶ Սույն կետին հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով:

⁷ Սույն կետը խմբագրվում է ըստ համապատասխան պատվիրատուի:

12.5 Գնումների բողոքարկման խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: Ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է 30 հազար ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՀ պետական բյուջե՝ այդ նպատակով լիազորված մարմնի անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվին:

7) այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետ փոխանցվի վճարը.

8) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.6 Բողոքը բավարարվելու մասին բողոքարկման խորհրդի կողմից կայացված որոշումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող աշխատանքային օրը տվյալ բողոքը քննած և որոշում կայացրած բողոքարկման խորհրդի անդամը գրավոր լիազորված մարմնին է տրամադրում բողոքարկման վճարը կատարած լինելը հավաստող փաստաթղթի պատճենը և այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի հետ վերադարձվող գումարը: Լիազորված մարմինը սույն կետում նշված փաստաթղթի պատճենը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրը ընթացքում բողոքարկման վճարը հետ է փոխանցում այն վճարած անձին՝ ներկայացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

12.7 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե սույն հրավերի 1-ին մասի 12.4 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա սույն կետով սահմանված ժամկետում շտկված և խորհուրդ ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

12.8 Օրենքի 50-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը խորհուրդ ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն խորհուրդ ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

12.9 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.10 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.11 Խորհուրդը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է խորհրդի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

12.12 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.13 Բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

12.14 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը գրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.15 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

12.16 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.17 Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով և սույն հրավերի 12.13-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Խորհրդի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն կետով նախատեսված որոշումը խորհուրդը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

ՄԱՍ II Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Բ Ա Ց Մ Ր Ց ՈՒ Յ Թ Ի Հ Ա Յ Տ Ը Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ ՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները)՝ սույն հրավերի 1-ին մասի 8.18 կետով սահմանված կարգով:

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «**Պիտանելիության չափորոշիչ**».

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 հայտարարություն սույն հրավերի 1-ին մասի՝ 2.2 կետով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու և 4.3 կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով նախատեսված պահանջների բացակայության մասին՝ համաձայն հավելված N 2-ի, ինչպես նաև նույն կետի 9-րդ ենթակետով նախատեսված անձանց մասին տեղեկատվություն՝ համաձայն հավելված N 2.1-ի.

2.3 հայտի ապահովում: Միակողմանի հաստատված հայտարարությունը՝ տուժանքը, ներկայացվում է հավելված N 8-ով սահմանված ձևին համապատասխան:

Հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացվելու դեպքում, հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը:

2) «**Տեխնիկական չափորոշիչ**».

2.4 հայտարարություն՝ սույն հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված որակավորման չափանիշներին (մասնագիտական փորձառություն, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական և ֆինանսական միջոցներ) իր համապատասխանության մասին համաձայն հավելված N 3-ի.

2.6 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.7 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).⁸

3) «**Ֆինանսական չափորոշիչ**».

2.8 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 4-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

⁸ Համապետել գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:

ԴԻՄՈՒՄ*
բաց մրցույթին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

_____ -ի կողմից “ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23» ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

բաց մրցույթի _____ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է` _____ :
մասնակցի անվանումը հարկի վճարողի հաշվառման համարը

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է` _____ :
մասնակցի անվանումը էլեկտրոնային փոստի հասցեն

_____ (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.⁹

⁹ սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
*յրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ
մասնակցի անվանումը

բավարարում է “ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23»* ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Միաժամանակ _____-ն
մասնակցի անվանումը

1) հայտնում և հավաստում է, որ “ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23»* ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

բ. բացակայում է մրցույթի հրավերով սահմանված _____-ին
մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) _____-ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս _____-ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք,

2) կից ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)**:

_____ մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ ստորագրություն

¹⁰ սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:
** Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

ՏՎՅԱԼՆԵՐ
մասնակցի իրական շահառուների մասին

h/h	Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

_____ -ն հավաստում է, որ իրական շահառուների մասին
մասնակցի անվանումը
ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

_____ (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ ստորագրություն

Կ. Տ.¹¹

¹¹ սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ
մասնակցի անվանումը

բավարարում է “ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23»* ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման
չափանիշների պահանջներին:

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ.¹²

¹² Սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով “ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23»* ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

«Ղ դրամ

Չափաբաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային 27-րդ մարզական խաղեր.			
2	Ազգային ժողովի գավաթի խաղարկություն			
3	Վետերան շախմատիստների առաջնություն			
4	ՀՀ նախագահի մրցանակի համար Լավագույն մարզական ընտանիք մրցույթ-փառատոն			
5	Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք բակային ավանդական փառատոն			
6	Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր			
7	Աշակերտների միջև անցկացվող սպորտլանդիա			
8	Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր			
9	ՀՀ նախագահի մրցանակի համար Լավագույն մարզական ընտանիք մրցույթ			
10	Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք փառատոն			
11	Սպորտլանդիա			
12	Անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային 27-րդ մարզական խաղեր.			
13	ՀՀ ազգային ժողովի մրցումներ 1-6 դասարանների աշակերտների միջև			
14	Անկախության 27-րդ տարեդարձին			

	նվիրված դպրոցականների քաղաքային 27-րդ մարզական խաղեր.			
15	Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք բակային ավանդական փառատուն			
16	ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն			
17	Երեխաների պաշտպանության միջազգային օր			
18	Շախմատի առաջնություն			
19	Լավագույն մարզական ընտանիք			
20	Շախմատի օլիմպիադա			
21	Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր			
22	Մասնակցություն լայնամասշտաբ սպորտային միջոցառումներին			
23	Կաշվե գնդակ ֆուտբոլի առաջնություն			
24	Ըմբշամարտի հուշամրցաշար կազմակերպում			
25	Սպորտային բաց առաջնությունների մասնակցություն			
26	Շախմատի օլիմպիադա			
27	Անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային 27-րդ մարզական խաղեր			
28	ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն			
29	Վարչական շրջանի ղեկավարի գավաթի բասկետբոլի մրցաշար			
30	ՀՀ նախագահի մրցանակի համար Լավագույն մարզական ընտանիք մրցույթ			
31	Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք բակային ավանդական փառատուն			
32	Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր			
33	Անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային 27-րդ մարզական խաղեր.			
34	ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն			
35	Ս. Գևորգյանի անվան հուշամրցաշար			
36	Մարզահամերգային տոնահանդես մանկապարտեզների սաների մասնակցությամբ			
37	Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք բակային ավանդական			

	փառատուն			
38	ՀՀ նախագահի Լավագույն մարզական ընտանիք մրցույթ			
39	Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ուղղամարզական խաղեր			

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ.¹³

¹³ սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը փեղեկագրում հրապարակելը:

**եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԲՄԾՁԲ-18/23>>**

Ք. _____

«___» _____ 20 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և -----ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն¹⁴:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց վճարումները կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են

¹⁴ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

Ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով¹⁵:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

¹⁵ Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիրը:

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում¹⁶:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները¹⁷:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

¹⁶ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

¹⁷ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համադրել գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:¹⁸

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

¹⁸ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը» բառերը փոխարինելով «և» բառով:

Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերի նախատեսված սկզբ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
Կենտրոն վարչական շրջան							
1	92621110/418	Կենտրոն վարչական շրջանում ՀՀ Անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային 27-րդ մարզական խաղեր. Կենտրոն վարչական շրջանի հանրակրթական դպրոցների մարզադահլիճներում և բակային բազմաֆունկցիոնալ դաշտերում: Անհրաժեշտ է՝ Մարզահագուստ (129) կոմպլեկտ, համարակալված, բամբակյա և սինթետիկ (50%-50%), գույնը՝ սև կարմիր երիզներով, չափսը՝ 48-50, <<Կենտրոն>>. տարբերանշանով: Մարզակոշիկ՝ 129 գույգ, սև, չափը՝ 38-44: Ծառայությունների մատուցում Չգազավորված խմելու ջուր՝ յուր. միջոցառման համար 10 շիշ (1լիտր)	դրամ			Կենտրոն վարչական ն շրջան	Հունվար-Փետրվար
2	92621110/418	Ազգային ժողովի գավաթի խաղարկություն Թ/աթլետիկա մարզաձևից/1-6-րդ դասարաններ/ մարզական խաղերն անց են կացվում<<Հայաստան>> ՄՄՀԽ-ի մարզադաշտում Անհրաժեշտ է՝ Մարզահագուստ (60) կոմպլեկտ, բամբակյա և սինթետիկ (50%-50%), գույնը՝ սև,կարմիր երիզներով, չափսը՝ 38-46, <<Կենտրոն>>. տարբերանշանով: Ծառայությունների մատուցում Չգազավորված խմելու ջուր՝ 5 շիշ (1լիտր) -Մրցումների կազմակերպիչ	դրամ			Կենտրոն վարչական ն շրջան	Փետրվար-մարտ
3	92621110/418	Անհրաժեշտ է -Ծառայությունների մատուցում -խաղերի ընդհանուր կազմակերպիչ .Գավաթ / 3 հատ/ - առաջին տեղի համար՝ բյուրեղապակյա, օբսիդիանե պատվանդանով, երկրորդ տեղի համար՝ արծաթագույն մետաղից, օբսիդիանե պատվանդանով, երրորդ տեղի համար՝ բրոնզագույն մետաղից, օբսիդիանե պատվանդանով: .Դիպլոմ / 3 հատ/ լաքապատ, Ա4 չափի: .Մեդալ / 3հատ/ 1-ը՝ ոսկեգույն, կարմիր ժապավենով, 1-ը՝ արծաթագույն, կապույտ ժապավենով, 1-ը՝ բրոնզագույն, ծիրանագույն ժապավենով: .Չգազավորված խմելու ջուր՝ 5 շիշ (1լիտր)	դրամ			Կենտրոն վարչական ն շրջան	Մայիս
4	92621110/418	ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթ-փառատոն. Անցկացման վայրը <<Հայաստան>> ՄՄՀԽ-ի մարզադաշտում: Անհրաժեշտ է .Մարզահագուստ ծնողների համար (24 կոմպլեկտ)բամբակյա և սինթետիկ (50%-50%),	դրամ			Կենտրոն վարչական ն շրջան	Ապրիլ - Մայիս

		<p>գույնը՝ գազարագույն, չափսը՝ 46-52, <<Կենտրոն>>. տարբերանշանով, յուրաքանչյուր կոպլեկտի մեջ՝ կարճ կիսավարտիք և կարճաթև մարզաշապիկ, երկար մարզատաբատ և երկարաթև մարզաբաճկոն: Մարզակոշիկ՝ 24 զույգ, սև, չափը՝ 36-44:</p> <p>.Մարզահագուստ երեխաների համար (12 կոմպլեկտ)՝ բամբակյա և սինթետիկ (50%-50%), գույնը՝ գազարագույն, չափսը՝ 30-38, <<Կենտրոն>>. տարբերանշանով, յուրաքանչյուր կոպլեկտի մեջ՝ կարճ կիսավարտիք և կարճաթև մարզաշապիկ, երկար մարզատաբատ և երկարաթև մարզաբաճկոն: Մարզակոշիկ՝ 12 զույգ, չափը՝ 28-34:</p> <p>.Չգազավորված խմելու ջուր 10 շիշ:</p>					
5	92621110/418	<p><<Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք>> 2018թ. համաքաղաքային բակային ավանդական փառատոն:</p> <p>Անց է կացվում 8 մարզաձևից / ֆուտբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, բասկետբոլ, հեծանվավազք, աթլետիկա, շաշկի, շախմատ:/:</p> <p>Անհրաժեշտ է</p> <p>.Ծառայությունների մատուցում</p> <p>.Մարզահագուստ (65 կոմպլեկտ) համարակալված, բամբակյա և սինթետիկ (50%-50%), գույնը՝ սև կարմիր երիզներով, չափսը՝ 30-38, <<Կենտրոն>>. տարբերանշանով: Մարզակոշիկ՝ 65 զույգ, սև, չափը՝ 28-34:</p> <p>.Կազմակերպիչ</p> <p>.Չգազավորված խմելու ջուր 10 շիշ (0,5 լիտր յուր.մարզձևի համար):</p>	դրամ			Կենտրոն վարչական ն շրջան	Հունիս - հուլիս
6	92621110/418	<p><<Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր>>:</p> <p>Անցկացման վայրը <<Հայաստան>> ՄՄՀԽ-ի մարզադաշտում:</p> <p>Անհրաժեշտ է</p> <p>. Ծառայությունների մատուցում</p> <p>.Մարզահագուստ (20 կոմպլեկտ)՝բամբակյա և սինթետիկ (50%-50%), գույնը՝ սև կարմիր երիզներով, երկարաթև մարզաշապիկ, երկար տաբատ, չափսը՝ 48-52, <<Կենտրոն>>. տարբերանշանով: Մարզակոշիկներ (20 զույգ), սև, չափը՝ 40-44:</p> <p>.Չգազավորված խմելու ջուր 10 շիշ (0,5 լիտր)</p>	դրամ			Կենտրոն վարչական ն շրջան	Հոկտեմբեր- Դեկտեմբեր
7	92621110/418	<p>Անհրաժեշտ է</p> <p>. Ծառայությունների մատուցում</p> <p>.Տեխնիկական մասի պատասխանատու</p> <p>.Գավաթ / 3 հատ/ -տոաջին տեղի համար՝ քյուրեղապակյա, օբսիդիանե պատվանդանով, երկրորդ տեղի համար՝ արծաթագույն մետաղից, օբսիդիանե պատվանդանով, երրորդ տեղի համար՝ բրոնզագույն մետաղից, օբսիդիանե պատվանդանով:</p> <p>.Դիպլոմ / 33 հատ/, լաքապատ, Ա4 չափի:</p> <p>.Մեդալ / 33 հատ/ 11-ը՝ ոսկեգույն, կարմիր ժապավենով, 11-ը՝ արծաթագույն, կապույտ ժապավենով, 11-ը՝ բրոնզագույն, ծիրանագույն ժապավենով:</p> <p>.Չգազավորված խմելու ջուր՝ 10 շիշ (1 լիտր)</p>	դրամ			Կենտրոն վարչական ն շրջան	Նոյեմբեր- դեկտեմբեր
Շենգավիթ վարչական շրջան							
8	92621110/436	<p><<Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության 2018թ, գորակոչային խաղեր>></p> <p>Շրջանային փուլին մասնակցում են վարչական շրջանի բոլոր հիմնական և ավագ դպրոցների աշակերտները:</p> <p>Ռազմամարզական խաղերի քաղաքային փուլին մասնակցում են</p>	դրամ			Շենգավիթ վարչական շրջան	մինչև 05.11.2018 թ.

		<p>վարչական շրջանում հաղթող երկու դպրոցների թիմերը: Անհրաժեշտ է ապահովել միջոցառման անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական գույք՝ մրցավարական սեղաններ, աթոռներ, ավել, սավոկ, աղբամաններ, ձայնային տեխնիկա՝ 1 կվտ. հզորությամբ, 2 խոսափողով: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Յուրաքանչյուր մարզաձևի մրցումների համար անհրաժեշտ են մրցավարներ, քարտուղարներ, բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով: Կազմակերպել խորհրդակցություն և վիճակահանություն միջոցառման մասնակից թիմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Վերահսկել մրցավարների կողմից միջոցառման առաջնությունների արդյունքների անաչառ ամփոփումը:</p>					
9	92621110/436	<p>«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի նախնական փուլին մասնակցում են վարչական շրջանի 32 մարզական ընտանիքներ, մրցույթի քաղաքային փուլում մասնակցում են 12-ը մարզական ընտանիք, որի կազմում ընդգրկված է հայր, մայր և երեխա: Մրցույթն իր մեջ ներառում է՝ փոխանցումավազք, ուժային վարժություններ, վազք, պարանի ձգում: Քաղաքային փուլին մասնակցելու համար մասնակիցներին ապահովել մարզահագուստով՝ /կիսաթև մարզաշապիկ 12 հատ կապույտ գույնի 48-54 չափսի կիսասինթետիկ վզի սրտաձև բացվածքով, օձիքով, մարզաշապիկի թևերին երեք սպիտակ գծեր և մարզաշապիկի մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ, կիսասանդրավարտիք 12 հատ կապույտ գույնի 48-54 չափսի կիսասինթետիք կողքից սպիտակ երեք գծեր: Կիսաթև մարզաշապիկ 12 հատ կապույտ գույնի 42-48 չափսի կիսասինթետիկ վզի սրտաձև բացվածքով, օձիքով, մարզաշապիկի թևերին երեք սպիտակ գծեր և մարզաշապիկի մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ, կիսասանդրավարտիք 12 հատ կապույտ գույնի 42-48 չափսի</p>	դրամ			<p>Շենգավի Թ վարչակա ն շրջան</p>	<p>մինչև 20.07.2018 Թ</p>

		<p>կիսասինթետիկ կողքից սպիտակ երեք գծեր: Կիսաթն մարզաշապիկի 8 հատ կապույտ գույնի 34-40 չափսի կիսասինթետիկ վզի սրտաձև բացվածքով, օձիքով, մարզաշապիկի թևերին երեք սպիտակ գծեր և մարզաշապիկի մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ, կիսաանդրավարտիք 8 հատ կապույտ գույնի 34-40 չափսի կիսասինթետիկ կողքից սպիտակ երեք գծեր: Կիսաթն մարզաշապիկի 4 հատ կապույտ գույնի 38-42 չափսի կիսասինթետիկ վզի սրտաձև բացվածքով, օձիքով, մարզաշապիկի թևերին երեք սպիտակ գծեր և մարզաշապիկի մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ, կիսաանդրավարտիք 4 հատ կապույտ գույնի 38-42 չափսի կիսասինթետիկ կողքից սպիտակ երեք գծեր/: Մարզահագուստները պետք է լինեն չօգտագործված:</p>				
10	92621110/436	<p><<Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք համաքաղաքային փառատոն>> Փառատոնին մասնակցում են վարչական շրջանի հավաքական թիմերը: Ներառում է «կաշվե գնդակ» ֆուտբոլ, «թռչող գնդակ» վոլեյբոլ, «Ոսկե զամբյուղ» բասկետբոլ, «Սրբնթաց գնդակ» հանդբոլ, «Անիվ» հեծանվավազք, մարզատրամաբանական խաղեր՝ մարզաձևերը: Անհրաժեշտ է ապահովել միջոցառման անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական գույք՝ մրցավարական սեղաններ, աթոռներ, ավել, սավոկ, աղբամաններ, ձայնային տեխնիկա՝ 1 կվտ. հզորությամբ, 2 խոսափողով: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Յուրաքանչյուր մարզաձևի մրցումների համար անհրաժեշտ են մրցավարներ՝ մրցավարների ընտրություն համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով: Քարտուղարներ, բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով: Միջոցառման մեկնաբանի ծառայություններ: Կազմակերպել խորհրդակցություն և վիճակահանություն միջոցառման մասնակից թիմերի ներկայացուցիչների</p>	դրամ		<p>Շենգավիթ վարչական շրջան</p>	<p>մինչև 30.07.2018թ.</p>

		մասնակցությամբ: Վերահսկել մրցավարների կողմից միջոցառման առաջնությունների արդյունքների անաչառ ամփոփումը: Կազմակերպել առաջնության մրցանակակիրների պարգևատրում՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ նախապես համաձայնեցված ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, դիպլոմներով, պատվոգրերով և շնորհակալագրերով:					
11	92621110/436	Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված «Մպորտլանդիա» մարզամշակույթային միջոցառում: Անցակացվում են սպորտլանդիայի ծրագրով նախատեսված շարժական խաղեր, մրցավարների օգնությամբ: Մասնակցում են վարչական շրջանի թվով 10 մանկապարտեզի սաները: Յուրաքանչյուր մանկապարտեզի 8-10 երեխա: Մրցումներում ներառված են փոխանցումավազք պարկերով, աքլորակոնիվ, գնդակի հափշտակում, հսկաներ և թզուկներ, գիշեր-ցերեկ: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Անհրաժեշտ են մրցավարներ, քարտուղարներ, բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով:	դրամ			Շենգավիթ վարչական ն շրջան	մինչև 01.06.2018 թ
12	92621110/436	<<ՀՀ անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 27-րդ մարզական խաղեր >> Մրցումներն անցկացվում են վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս, հանդբոլ, ֆուտբոլ, աթլետիկա և ֆուտ զալ մարզաձևերից: Անհրաժեշտ է ապահովել՝ միջոցառման անցկացման համար՝ անհրաժեշտ տեխնիկական գույք՝ մրցավարական սեղաններ, աթոռներ, ավել, սավոկ, աղբամաններ, ձայնային տեխնիկա 1 կվտ. հզորությամբ, 2 խոսափողով: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Յուրաքանչյուր մարզաձևի մրցումների համար անհրաժեշտ են	դրամ			Շենգավիթ վարչական ն շրջան	մինչև 20.05.2018 թ.

		<p>մրցավարներ՝ մրցավարների ընտրություն համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով: Քարտուղարներ, բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով: Միջոցառման մեկնաբանի ծառայություններ: Կազմակերպել խորհրդակցություն և վիճակահանություն միջոցառման մասնակից թիմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Վերահսկել մրցավարների կողմից միջոցառման առաջնությունների արդյունքների անաչառ ամփոփումը: Կազմակերպել առաջնության մրցանակակիրների պարզևատրում՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ նախապես համաձայնեցված ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, դիպլոմներով, պատվոգրերով և շնորհակալագրերով:</p>					
13	92621110/436	<p>ՀՀ ազգային ժողովի մրցումներ 1-6 դասարանների աշակերտների միջև Մրցումներն անցկացվում են չորս փուլով՝ ներդպրոցական, շրջանային, քաղաքային, հանրապետական: Մասնակցում են վարչական շրջանի հանրակրթական դպրոցների 1-6-րդ դասարանների թիմերը: Մրցումներն իրենց մեջ ներառում են վազք, թենիսի գնդակի նետում, հեռացատկ, ձգումներ, փոխանցումավազք: Յուրաքանչյուր դասարանից մասնակցում են 2 տղա, 2 աղջիկ: Շրջանային փուլի հաղթողները մասնակցում են քաղաքային փուլին: Մրցումներն անցկացվում են վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս, հանդբոլ, ֆուտբոլ, աթլետիկա և ֆուտ գալ մարզաձևերից: Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է մասնակիցներին ապահովել մարզահագուստով՝ 4 հատ 30-32 չափսի կիսասինթետիկ, կարմիր վերնաշապիկ մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ և կապույտ կիսավարտիք, 4 հատ 34-36 չափսի կիսասինթետիկ, կարմիր վերնաշապիկ մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ և կապույտ կիսավարտիք, 4 հատ 36-38 չափսի կիսասինթետիկ, կարմիր վերնաշապիկ մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ և</p>	դրամ			<p>Շենգավիթ վարչական ն շրջան</p>	<p>մինչև 30.05.2018թ</p>

		<p>կապույտ կիսավարտիք, 4 հատ 38-40 չափսի կիսասինթետիկ, կարմիր վերնաշապիկ մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ և կապույտ կիսավարտիք, 4 հատ 40-42 չափսի կիսասինթետիկ, կարմիր վերնաշապիկ մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ և կապույտ կիսավարտիք, 4 հատ 42-44 չափսի կիսասինթետիկ, կարմիր վերնաշապիկ մեջքին սպիտակ տառերով գրված ՇԵՆԳԱՎԻԹ և կապույտ կիսավարտիք: Մարզահագուստները պետք է լինեն չօգտագործված: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Յուրաքանչյուր մարզաձևի մրցումների համար անհրաժեշտ են մրցավարներ՝ մրցավարների ընտրություն համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով: Քարտուղարներ, բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով:</p>				
	Նորք-Մարաշ վարչական շրջան					
14	92621110 /416	<p>«Ն» անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային մարզական խաղեր</p> <p>Մրցումներն անցկացվում են վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս, հանդբոլ, ֆուտբոլ, աթլետիկա և ֆուտ զալ մարզաձևերից: Անհրաժեշտ է ապահովել՝ միջոցառման անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական գույք՝ մրցավարական սեղաններ, աթոռներ, ավել, սավոկ, աղբամաններ: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Յուրաքանչյուր մարզաձևի մրցումների համար անհրաժեշտ են մրցավարներ՝ մրցավարների ընտրություն համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով: Քարտուղարներ, բժշկական և բուժքույրական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով: Կազմակերպել խորհրդակցություն և վիճակահանություն միջոցառման մասնակից թիմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Վերահսկել մրցավարների կողմից միջոցառման առաջնությունների արդյունքների անաչառ ամփոփումը: Կազմակերպել առաջնության մրցանակակիրների պարգևատրում՝</p>	դրամ		Նորք-Մարաշ վարչական շրջան	Փետրվար

		նախապես համաձայնեցված ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, դիպլոմներով, պատվոգրերով և շնորհակալագրերով: Համաձայն կանոնադրությամբ նշված ժամանակացույցի՝ ապահովել տրանսպորտային ծառայություններով /միկրոավտոբուս 17 տեղ/: Մասնակիցների քանակ 1, Մարզիկ - 113, մարզիչ -6, ներկայացուցիչ 2:					
15	92621110 /416	"Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք" համաքաղաքային բակային ավանդական փառատոն Փառատոնին մասնակցում են վարչական շրջանի հավաքական թիմերը: Ներառում է «կաշվե գնդակ» ֆուտբոլ, «թռչող գնդակ» վոլեյբոլ, «Ռսկե զամբյուղ» բասկետբոլ, «Սրընթաց գնդակ» հանդբոլ, «Անիվ» հեծանվավազք, մարզատրամաբանական խաղեր՝ մարզաձևերը: Անհրաժեշտ է ապահովել՝ միջոցառման անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական գույք՝ մրցավարական սեղաններ, աթոռներ: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Յուրաքանչյուր մարզաձևի մրցումների համար անհրաժեշտ են մրցավարներ՝ մրցավարների ընտրություն համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով: Քարտուղարներ, բժշկական և բուժքրոյական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով: Կազմակերպել խորհրդակցություն և վիճակահանություն միջոցառման մասնակից թիմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Վերահսկել մրցավարների կողմից միջոցառման առաջնությունների արդյունքների անաչառ ամփոփումը: Կազմակերպել առաջնության մրցանակակիրների պարգևատրում՝ նախապես համաձայնեցված ոսկեգույն, արծաթագույն, բրոնզագույն մեդալներով, դիպլոմներով, պատվոգրերով և շնորհակալագրերով: Համաձայն կանոնադրությամբ նշված ժամանակացույցի՝ ապահովել տրանսպորտային ծառայություններով /միկրոավտոբուս 17 տեղ/: Մասնակիցների քանակ 1, Մարզիկ - 113, մարզիչ -6, ներկայացուցիչ 2:	դրամ			Նորք-Մարաշ վարչական շրջան	/2018թ. Հունիսի 10-ից/
16	92621110 /416	ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն Մրցումներն անցկացվում են չորս փուլով՝ ներդպրոցական, շրջանային, քաղաքային, հանրապետական: Մասնակցում են վարչական շրջանի հանրակրթական դպրոցների 1-6-րդ դասարանների թիմերը: Մրցումներն իրենց մեջ ներառում են վազք, թենիսի գնդակի նետում, հեռացատկ, ձգումներ, փոխանցումավազք: Յուրաքանչյուր դասարանից մասնակցում	դրամ			Նորք-Մարաշ վարչական շրջան	/2018թ. Մայիս ամիս/

		<p>են 2 տղա, 2 աղջիկ: Շրջանային փուլի հաղթողները մասնակցում են քաղաքային փուլին: Մրցումներն անցկացվում են վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս, հանդբոլ, ֆուտբոլ, աթլետիկա և ֆուտ զալ մարզաձևերից: Մասնակիցների քանակ Մարզիկ - 24, մարզիչ -2, ներկայացուցիչ 2: Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է մասնակիցներին ապահովել մարզահագուստով՝ գազարագույն շապիկներ, /չափը ճշտել մարզիկների ցուցակների կազմումից հետո/: Մարզահագուստները պետք է լինեն չօգտագործված: Միջոցառման կազմակերպումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել վարչական շրջանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի հետ: Յուրաքանչյուր մարզաձևի մրցումների համար անհրաժեշտ են մրցավարներ՝ մրցավարների ընտրություն համապատասխան մարզաձևի ֆեդերացիայի միջոցով: Քարտուղարներ, բժշկական և բուժքրոյական ծառայություններ միջոցառման ընթացքում՝ անհրաժեշտ դեղորայքով:</p>					
